



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

Միրելի՛ դպրոցականներ, ուսանողներ և մանկավարժներ,

Շնորհավորում եմ Գիտելիքի օրվա կապակցությամբ:

Այս տարի սեպտեմբերի 1-ը դիմավորում ենք առանձնակի ոգևորությամբ, որովհետև կրթական հաստատությունների դռներից ներս է մտնելու հեղափոխության սերունդը, ով ունի նոր պահանջներ, նոր հայացք ու նոր տեսլական: Մենք բոլորս՝ յուրաքանչյուրս մեր տեղում, լիազորված ենք իրականացնել այս հաղթանակած սերնդի կրթական ու դաստիարակչական կարևորագույն գործառույթները: Մենք այսօր մեկնարկում ենք ընթացքն այն ճանապարհով, որը մեզ տանելու է դեպի իրավագիտակից և պահանջատեր հասարակություն ունեցող ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետություն:

Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ծնողներ, պայքարը արդարության և ազնվության համար պետք է մուտք գործի անգամ ամենահեռավոր դպրոցի ամենափոքր դասասենյակ և ի չիք դարձնի տասնամյակներով ամրապնդված արատավոր երևույթները: Կոչ եմ անում ձեզ՝ բոլորիդ, կրթության ոլորտում գործել ազնվագույն սկզբունքներով, լինել համարձակ, ճանաչել սեփական իրավունքներն ու կարողությունների առավելագույն սահմաններում հակազդել անընդունելի ցանկացած երևույթի կամ գործողության:

Մեզ համար պետք է սկզբունքային և առաջնային կարևորության խնդիր լինի իրավագիտակից քաղաքացու արժևորումն ու վերջնական կայացումը մեր հասարակության ներսում: Այո՛, կարևոր է յուրաքանչյուր ոլորտում ունենալ լավագույն մասնագետներ ու գիտնականներ, սակայն առողջ հասարակությունը միակ նախապայմանն է նրանց բոլորի կայացման ու զարգացման համար: Ուստի հորդորս ու խնդրանքս է՝ դաստիարակել այնպիսի սերունդ, որը հստակ կգիտակցի իր դերն ու նշանակությունը հասարակական-քաղաքական բոլոր գործընթացներում և

պետականաշինության անձևներ գործում: Արդյունքում մենք կունենանք իրավատեր և պետության հանդեպ սեփական պարտավորությունները զիտակցող քաղաքացիներ:


Մենք այսօր ունենք կիսավեր դպրոցներ և անմխիթար վիճակում գտնվող արտադպրոցական կրթական հաստատություններ, նույնիսկ փակված դպրոց մեր համայնքներից մեկում: Ինձ համար սա ցավալի է, և մենք այսօր ներդնում ենք առավելագույն ջանքերը, որ օր առաջ ամենահեռավոր համայնքներում անգամ աշակերտների թիվը միայն ավելանա. Հայաստանում ոչ մի դպրոցի լինելիությունը չպետք է վտանգված լինի:

Սիրելի՛ կոտայքցիներ, ես և մենք բոլորս հպարտությամբ ստանձնել ենք ՀՀ քաղաքացու կյանքը վերափոխելու և դրան նոր որակ հաղորդելու պատասխանատվությունը: Այս ճանապարհին կրթության ոլորտում բարեփոխումներն ինձ համար առաջնային են: Այստեղ մենք արդեն ունենք ձեռքբերումներ, որոնք նշանակալի են պաշտոնավարման այս կարճ ժամանակահատվածի համար:

Վստահեցնում եմ, որ նոր՝ ավելի զգալի փոփոխությունները նույնպես լինելու են ամենատեսանելի ապագայում, որովհետև Կոտայքում բարեփոխումներն ԱՆԿԱՍԵԼԻ ԵՆ:

Մաղթում եմ նորարարություններով, համարձակ նախաձեռնություններով ու նոր ձեռքբերումներով լեցուն ուսումնական տարի:

Հարգանքով

 Ռ. Պետրոսյան